



**Կոմիտաս լարային ազգային քառյակի - 100, Ա. Գաբրիելյանի-125 ամյակներին նվիրված համերգը Վահագն Պապյանի հետ, 10.11.2024 թ.
Komitas National String Quartet - 100th, A. Gabrielyan - 125th Anniversary Concert with Vahagn Papayan, 10.11.2024**

**Կոմիտաս լարային քառյակը Սուրբ Ղազար կղզում, Կոմիտասի մահդիմակի ցուցասրահում 2024 թ.
Komitas String Quartet on St. Lazarus Island, Komitas death mask Exhibition Hall, 2024**

Национальный струнный квартет имени Комитаса - 100. Концерт в честь 125-летия А. Габриэляна с участием Ваагна Папяна, 10.11.2024

Струнный квартет имени Комитаса на острове Святого Лазаря. Выставочный зал посмертной маски Комитаса, 2024

Սախարան
Այս տարի լրանում է Կոմիտասի անվան ազգային լարային քառյակի հիմնադրման 100-ամյակը: Աշխարհի ամենատարեց լեգենդար քառյակը պանծալի այս տարեդարձն ամբողջ 2024 թվականի ընթացքում տարաբնույթ միջոցառումներով և իհարկե համերգային կատարումներով է նշանավորել: Այն Հայաստանի հիմնարկած առաջին քառյակներից է. ստեղծվել է Մոսկվայում՝ 1924 թվականին: 100 տարի առաջ մոսկվաբնակ կոնսերվատորիայի հայ ուսանողները՝ Ավետ Գաբրիելյանը (1-ին ջութակ), Լևոն Օհանջանյանը (2-րդ ջութակ), Միքայել Տեղյանը (ալտ) և Սերգեյ Ասլամազյանը (թավջութակ) դրոշմում են ստեղծել լարային քառյակ, պրոֆեսոր Եվգենի Միխայելի Գուզիկովի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ:

100-ամյա պատմական ընթացքը

Ուսանող-արտիստները փորձում էին Բեթհովենի 1-ին Կվարտետը, որն էլ քառյակի առաջին համերգային ծրագիրն էր 1925 թվականի մարտի 1-ին: Այսպես սկսվեց քառյակի գործունեությունը, որը շարունակվում է մինչ օրս (1.):

1920-ականների վերջերին իսկ քառյակի գործունեությունը բարձր են գնահատել Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսորները՝ Մ. Բպոլիտով-Բվանովը, Կ. Իգումնովը, Ս. Վասիլենկոն, Ռ. Գլիերը, Կ. Սարաջընը:

100-տարիների ընթացք: Մեր ամենալուրջ վերլուծություններով, կյանքի և մարդկային հարաբերությունների փորձով եկել ենք հետևյալ եզրակացությանը՝ հաջողության գրավականներից է ու ամենակարևորն այն է, որ այս երկար ճանապարհորդության ընթացքում քառյակն ունեցել է ընդամենը երկու ղեկավար: Բազմաթիվ հայ և այլազգի կոմպոզիտորներ իրենց ստեղծագործությունները նվիրել են քառյակին: Կոմիտասի անվան քառյակը բացառիկ է ոչ միայն կամերային արվեստում իր անվիճելի ներդրումով և ձեռք բերած համաշխարհային համբավով, այլև իր եզակի երկարակեցությամբ:

100-ամյա քառյակը մշտապես գործել է, առանց ընդհատումների. անգամ Հայրենական մեծ պատերազմի արհավիրքները չեն լռեցրել նրան: Քառյակի կենսունակությունն ու

երկարակեցությունը հիմնականում ապահովել են նրա երկու նվիրյալ ղեկավարները՝ Ավետ Գաբրիելյանը՝ 1924-1976 թթ. և Էդուարդ Թադևոսյանը՝ 1976 թվականից առ այսօր (1.):

Անսամբլը 1931 թվականից անվանվել է Հայկական ԽՍՀ պետական քառյակ: Մեկ տարի անց, պատիվ է ունեցել կրել Մեծն Կոմիտասի անունը, ում ծննդյան 155-ամյակը տոնվում է այս տարի:

Սկսած 1932 թվականից քառյակը համերգներով շրջագայել է ԽՍՀՄ հանրապետություններում:

1933 թվականին, Լ. Օհանջանյանի մահից հետո, որպես 2-րդ ջութակահար քառյակում հանդես է եկել Գ. Սարաբյանը, 1938 թվականից՝ Ն. Բալաբանյանը:

1938 թվականին քառյակին շնորհվել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր կոլեկտիվի կոչում, և նույն թվականին լարային քառյակների համամիութենական մրցությունում արժանացել է 1-ին մրցանակի՝ Մեծ թատրոնի քառյակի հետ կիսելով պատվավոր տեղը: 1939 թվականին և 1956 թվականին քառյակը մասնակցել է Մոսկվայում հայ արվեստի տասնօրյակներին՝ հանդես գլոբալ ռուսական, եվրոպական և հայ երաժշտության տարբեր նմուշների բարձրարվեստ կատարումներով: Աշխարհահռչակ քառյակի արտիստները 1945 թվականին՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչում են ստանում, իսկ 1946-ին արժանացել են ԽՍՀՄ պետական մրցանակի (1.):

1953 թվականից քառյակը պարբերաբար մեկնել է նաև արտասահմանյան հյուրախաղերի և իր արվեստով նվաճել ԱՄՆ, Գերմանիան, Անգլիան, Ճապոնիան, Գանադան, Նիդեռլանդները, Նորվեգիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և այլ երկրներ: Քառյակի հետ տարբեր տարիներին ելույթներ են ունեցել Ալեքսանդր Բորիսի Գոլդենվեյզերը, Կոնստանտին Նիկոլայի Իգումնովը, Հենրիխ Գուստավի Նեյհաուզը, Սվյատոսլավ Թեոֆոլի Ռիխտերը, Դմիտրի Դմիտրիի Շոստակովիչը, Էմիլ Գրիգորի Գիլելսը, Վիկտոր Կարպի Մերժանովը, Մարիա Իսրայելի Գրինբերգը, Սվյատոսլավ Նիկոլայի Կոնչևիցկին, Մատիսլավ Լեոպոլդի Ռոստրոպովիչը, Սվետլանա Հովհաննեսի Նավասարդյանը և աշխարհահռչակ այլ երաժիշտներ:

Նվիրվում է Կոմիտասի անվան ազգային

1965 թվականին քառյակն արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի:

Անվանի ջութակահար և հասարակական գործիչ Հակոբ Խանջյանը քառյակի մասին ասել է. «Կոմիտասի անունը կրել նշանակում է ունենալ կատարողական մեծ արվեստ, հուզականություն, անմիջականություն, բարձր կուլտուրա: Կոմիտասի անունը կրել, նշանակում է արվեստն ի սպաս դնել ժողովրդին: Կոմիտասի անունը կրել, վերջապես, նշանակում է, եթե ոչ նրա օրինակով գյուղից գյուղ, գավառից գավառ շրջել հայ երգը գտնելու, ձայնագրելու, մշակելու համար, ապա գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, երկրից երկիր շրջել, հայ և համաշխարհային երաժշտության նվաճումները բարձրարվեստ մատուցելու համար բոլորին և ամենից առաջ սեփական ժողովրդի ամենալայն զանգվածներին» (2.):

Էդուարդ Թադևոսյանը սիրում է պատմել. «...Երբ 1976-ին Ավետ Գաբրիելյանն ինձ հանձնեց իրեն ամրակցված Գվառնիերիի ջութակը, ասաց. «Քառյակի 60-70 ամյակը պիտի նշեք, մնացածը Ձեր գործն է»: Հիմա (համոզված եմ՝ նա ակամջալուր է մեզ) կարող եմ ասել. «Մասետրո, Ձեր պատվիրանը գերազանցվել է. նշում ենք 100- ամյակը» (3. էջ 9):

2024 թվականը որպես հորեյանական տարի

Տասը տարի առաջ, 2014 թ. նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ քառյակին շնորհվել է «Ազգային» կարգավիճակ: 2024-ի նույն օրն էլ Արաս Խաչատրյանի անվան համերգասրահում նշանակոթվել է հանդիսավոր պաշտոնական համերգով: Ծրագրում, հանձարեղ քառյակը, եվրոպական և հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ի թիվս կատարել է նաև սփյուռքահայ (Շվեդիա՝ Ստոկհոլմ) դաշնակահար և կոմպոզիտոր Կարին Հելլման-Գևորգյանի կվարտետի համար գրված ծրագրային ստեղծագործությունը:

Էդուարդ Թադևոսյանն իր ընկերներից բազմաթիվ շնորհավորանքներ և ջերմ խոսքեր են հղվել: Ֆրանսաբնակ նկարաչ-երաժշտագետ, շեփորահար Էդուարդ Բարսեղյանը քառյակի 100-ամյակի առիթով իր նամակում գրել է. «Հարգելի Կոմիտասի քառյակի անդամների մասին կարող եմ միայն ասել, որ Պասյան Յաշային և Կոսեմյան Ալիկին ճանաչում էի Ռ. Մելիքյանի երաժշտական ուսումնարանից: Նրանք լավ երաժիշտներ էին, բայց նրանց տաղանդը իրոք ծաղկեց հենց Կոմիտասի անվան քառյակի կազմում, որտեղ Էդուարդ Թադևոսյանն արդեն առաջին ջութակահարն էր: Ես և Էդիկը վաղեմի բարեկամներ էինք, հաճախակի այցելում էի նրա ընտանիքին, երբ նա ավարտում էր Չայկովսկու անվան երաժշտական դպրոցը, Տատյանա Բագրատովնայի մոտ: Նրա հորդորով ընդունվել է Մոսկվայի կոնսերվատորիա Լեոնիդ Կոզանի դասարան: Նշենք, որ Կոզանն Արամ Խաչատրյանի ջութակի Կոնցերտի առաջին և լավագույն կատարողն էր: Եվ, երևի, պատահական չէր, որ երիտասարդ Էդիկ Թադևոսյանը, ում Արամ Խաչատրյանը երևանյան հեղինակային երեկոյին ընտրել էր իր ջութակի Կոնցերտը կատարելու դարձավ Կոզանի ուսանողը: Եվ, իհարկե, Մոսկվայում, արդեն հրավիրվելով հայտնի Կոմիտասի քառյակ, Ավետ Գաբրիելյանի կողմից: Էդիկ Թադևոսյանն արժանիորեն շարունակում է վարպետորեն ղեկավարել այս հռչակավոր քառյակը, արդեն որոշակի երիտասարդացած, սակայն միշտ փայլուն անսամբլը»:

13.11.2024 թ.

Ցանկանում եմ հրավիրել մեր երաժշտագետների ուշադրությունը՝ տարբեր տարիների քառյակի կազմում ներգրավված արտիստների, նրանց կատարողական արվեստի մասին հողվածներ գրել, ներկայացնելու սույն ամսագրի խմբագրություն: Միրով դրանք կիրատարակենք քանի որ նրանցից քչերի մասին հրատարակումներ կան ամսագրում: Հավելենք, միայն նաև, որ «Երաժշտական Հայաստան» ամսագրի երկու համարներից, արդեն իսկ նվիրված է եղել քառյակին: Առաջիններից մեկը՝ 2000 թվականի #2 (3) Կոմիտասի անվան լարային քառյակի 75-ամյակին, և մյուսը՝ 2010 թվականի #1 (36) համարը լուսաբանել է մասետրոյի՝ Էդուարդ Թադևոսյանի գործունեության 40-ամյակը: Իսկ 100-ամյակի առթիվ՝ հրատարակվել է մի անգուզական պատկերագրող-գիրք. «Կոմիտասի անվան քառյակ-100. Քառագագաթ ինչպես Արագածը», թողարկվել Կոմիտաս-Ասլամազյանի մշակումների ձայներիցը քառյակի կատարմամբ:

Քառյակի կազմը՝ տարբեր տարիներին

1925-1933-ին քառյակի կազմում էին՝ Ավետ Գաբրիելյանը (ղեկավարել է 52 տարի), Լևոն Օհանջանյանը, Միքայել Տերյան, Սերգեյ Ասլամազյանը (աշխատել է 44 տարի): «Քառյակի մյուս ատանցքային անդամը՝ առաջնակարգ թավջութակահար Սարգիս Ասլամազյանը, բացահայտվեց նոր կոմպոզիտորական փայլուն տաղանդով: Նրա անգուզական մշակումները խթան հանդիսացան նաև այլ կոմպոզիտորների համար՝ ստեղծելու կվարտետային գործեր: Իսկ մշակումների առանցքում են Ասլամազյանի պաշտամունքն էր մեծահանձար Կոմիտասը, որի մեղեդիներն աստիճանաբար պիտի դառնային քառյակի այցերարտը՝ մինչ օրս աշխարհով մեկ փառաբանելով հայկական տոհմիկ երաժշտությունը...» (3. էջ 5-6): Գրում է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, գրականագետ հորեյանական պատկերագրող-գրքի հեղինակ, կազմող Կարո Վարդանյանը:

1933-1936-ին քառյակին է միանում Գրիգորի Սարաբյանը Լևոն Օհանջանյանի փոխարեն:



Կոմիտաս լարային քառյակ,
Կոմիտաս-Ասլամազյան մշակումները, CD, 2024թ.

Komitas String Quartet,
Komitas, arranged by S. Aslamazyan, CD, 2024.

Струнный квартет имени Комитаса.
CD, Комитас, обработки С. Асламзяна, 2024.

լարային քառյակի 100-ամյա հոբելյանին

1936-1938-ի կազմն է անփոխարինելի՝ Ավետ Գաբրիելյանը, Գրիգորի Մարաբյանը, Նիկիտա Բալաբանյանը, Մերգեյ Ասլամազյանը:

1938-1947 թվականների կազմն էր՝ Ավետ Գաբրիելյան, Նիկիտա Բալաբանյան, Միքայել Տերյան, Մերգեյ Ասլամազյան:

1947-1968 թվականներին հրավիրվել են Ռաֆայել Դավիդյանցը և Հենրիխ Թալալյանը: Էդուարդ Թադևոսյանը հիշում է իր հարգարժան ընկերոջը. «Հենրիխ Թալալյանը՝ աստվածատուր շնորհով օժտված պլտահարը, քառորդ դար ծառայեց քառյակին: Ես բախտ ունեցա ընկերություն անելու Հենրիխի հետ, թեպետ նա 48 տարեկան էր, ես՝ 22: Մեզ բարեկամացրել էին մեր մասնագիտական, մարդկային որակները: Մինչև օրս ականջներումս հնչում է նրա պլտի յուրահատուկ, հյութեղ ազնվաբարո ձայնը, անկրկնելի թալալյանական թավ երանգը: Իսկ որքան հրաշալի պլտահարներ դաստիարակեց՝ ապրելով ընդամենը 50 տարի:» (3. էջ 12):

1968-1970 թվականներին ՌԽՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1967 թ.) Արմեն Գեորգիանը փոխարինել է Մերգեյ Ասլամազյանին:

1970-1972 թվականներին Ավետ Գաբրիելյանը հրավիրել է դեռ Մոսկվայում ուսանող Էդուարդ Թադևոսյանին: Կազմում էին նաև՝ Հենրիխ Թալալյանը, Արմեն Գեորգիանը:

1972-1976-ի քառյակի կազմում էին՝ Ավետ Գաբրիելյանը, Էդուարդ Թադևոսյանը, Գրիգորի Մարկազյանը, Դավիթ Գրիգորյանը:

1976-1984 թվականներին Էդուարդ Թադևոսյանի հետ քառյակում գործում էին Հակոբ Մեքինյանը, Յակով Պապյանը, Ֆելիքս Միմոնյանը: Այս նոր ձևավորված կազմն է, որ Էդուարդ Թադևոսյանի ղեկավարությամբ համախմբվել է որպես պրոֆեսիոնալ և ներդաշնակ անսամբլ:

1984-1990 թթ. վերելքի ճամփան հետևյալ զագաթներն էին հարթել՝ Էդուարդ Թադևոսյան, Սուրեն Հախնազարյան, Յակով Պապյան, Ֆելիքս Միմոնյան:

1990-2000 թվականներից առ այսօր, Յակով Պապյանի ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսում վերաբնակվելուց հետո քառյակի անփոխարինելի պլտահարը՝ դարձավ Ալեքսանդր Կոստեյանը, ով նաև ղեկավարել է ԵՊԿ լարային ամբիոնը (2000-2024 թթ.):

2000-2010 թվականներին՝ Ֆելիքս Միմոնյանի Ֆրանսիա՝ Փարիզ տեղափոխվելուց հետո, թավջութակահարի պարտականություններն ստանձնում է ՀՀ վաստակավոր արտիստ միջգագային համբավ վայելող Արամ Թալալյանը, ով շարունակել է թալալյանական ընտանիքի երաժշտական ավանդույթները՝ տաղանդավոր թավջութակահար է:

2008-2010 թվականներին Սուրեն Հախնազարյանի Մոսկվայում վերաբնակվելու պատճառով նրանց միացավ առաջին կին անսամբլիստը՝ Սյուզի Երիցյանը:

2010 թվականից, երբ Էդվարդ Թադևոսյանը քառյակի կազմը համարեց կանանցով ի դեմս Սյուզի Երիցյանի, թավջութակահար Հասմիկ Վարդանյանի և, իհարկե, Ալեքսանդր Կոստեյանի ընկերակցությամբ, Էդվարդ Միրզոյանը կատակեց՝ ասելով, չորս ֆրակները փոխարինվեցին՝ երկու ֆրակով և երկու շրջագգեստով:

2016 թվականից՝ Հասմիկ Վարդանյանի մեկնումով Փարիզ, Կոմիտասի անվան քառյակը համագործակցում է թավջութակահար Անժելա Մարգարյանի հետ, այսինքն անխափան միրզոյանական նրբագեղ հումորի վերը նշածս կազմով: Մեջբերենք նաև նրա լրջմիտ կարծիքը քառյակի մասին. «Կոմիտասի անվան քառյակը հայ ազգային կատարողական արվեստի բարձրագույն նվաճումներից մեկն է, նրա հպարտությունը: Նրա համերգները մշտապես ՄԵԾ ԵՂԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ՝ առաջին նոտայից մինչև վերջինը»:

Եթե ժամանակի հետվից դիտարկենք, նկատում ենք, որ Կոմիտասի անվան քառյակի արտիստները լարային մշակույթի գերդաստանների ներկայացուցիչներ են ինչպես թալալյանները, երիցյանները, հախնազարյանները, վարդանյանները...

Աշխարհի հնագույն գործող քառյակը՝ կատարողական արվեստի իր վիթխարի փորձով և երաժշտական աշխարհում հնարավոր բոլոր ձեռքբերումներով, թնկոխում է գործունեության երկրորդ դարը՝ հավատարիմ հայ և համաշխարհային դասական երաժշտության հանրահռչակման իր առաքելությանը (1.):

Լուսանկանները և նյութերը տե՛ս՝ կազմին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://www.komitasquartet.am/htmls_arm/about_ou_mission.html
2. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D...>
3. Կոմիտասի անվան քառյակ-100. Քառագագաթ ինչպես Արագածը, Եր., 2024 թ., - 148 էջ:
https://www.komitasquartet.am/htmls_arm/about_ou_mission.html
<https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D...>

Նվիրվում է Կոմիտասի անվան ազգային



*Կոմիտասի անվան ազգային
լարային քառյակ,
Էդուարդ Թադևոսյան*

*Komitas national string
quartet,
Eduard Thadevosyan
Национальный струнный
квартет имени Комитаса,
Эдуард Тадевосян*

Komitas string quartet-100. Four-peaked like Aragats, Aragats', Yer., 2024, -148 ejj.
3. Komitasi anvan qaryak-100. Qaragath inchpes, Yer., 2024, - 148 p.

REFERENCES

- https://www.komitasquartet.am/htmls_arm/about_ou_mission.html
- <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D...>

Հեղինակի մասին. ԳՈՂԱՐ ԿԱՌԼԵՆԻ ՇԱԳՈՅԱՆ (ծ. 29.4.1958 թ. ք. Երևան), երաժշտագետ, հրատարակիչ, ռադիոլրագրող: Ավարտել է ԵՊԿ երաժշտագիտ. բաժինը, (1983, պրոֆ., արվեստագիտ. դոկտոր Ն. Կ. Թահմիզյան, 1988-ին դիպլոմ. աշխատանքը՝ «Գուրգեն Ալեմշահ» մենագրությունը, արժանացել է ՀՀ ԳԱԱ ԱԻ Պատվոգրի), եղել է հայցորդ՝ Պ. Չալոպսկու անվ. ՄՊԿ-ի հայրենի, այժմ ռուսական երաժշտության ամբիոնում (դեկ-ներ՝ պրոֆ., արվեստագիտ. դոկտորներ Մ. Եվ. Տարականով՝ 1988-1992 թթ., նրա մահից հետո՝ Ե. Բ. Դոլինսկայա՝ 2002-2004 թթ.): 1987-ին անցել է ՄՊԿ վերավորակավորման 3-ամսյա ստաժավորումը: 1979-1981 թթ. գրաբարի դասընթաց է անցել ԵՊՀ (1 տարի ազատ ունկնդիր) և ԵՊԿ (իր նախաձեռնությամբ Խ. Պայանը հրավիրվել է ԵՊԿ, 2 տարի, գերազանց, սերտիֆիկատ): Հիմնադրել է «Երաժշտական Հայաստան» միջազգ. գիտ. ամսագիրը հիմնադիր-գլխավոր խմբագիր (ռեկտոր, պրոֆ., Ա. Բ. Սմբատյան՝ հիմնադիր-տնօրեն)՝ 1996-ից և 1998-ին՝ լույս է տեսել 1-ին համարը՝ գրանցվել է ԲՈԿ-ում, (ընդունելի ատենախոսությունների ցանկում 2003-ից): 1999-ից «Երաժշտական Հայաստան» ամսագրի բարեկամների ակումբի (դեկավար): Աշխատում է ԵՊԿ-ում 2000-ից, 2004-ից հրատարակիչ՝ առ այսօր «ԵՊԿ հրատարակչության» տնօրեն (2019-ից՝ վարիչ) և գլխավոր խմբագիր (Ս. Գ. Սարաջյան՝ հրատարակչական խորհրդի հիմնադիր-նախագահ): 2004-2012 թթ. ԵՊԿ դասախոսների ուսումնամեթոդ. հոդվածների ժողովածու Պրակ 1-7 (2004-2010, հիմնադիրներ կազմող և խմբագիր): 2005-ից «Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր և թողարկման պատասխանատու: ՀՀ ժուռնալիստների (1995), ժուռնալիստների Միջազգային Ֆեդերացիայի (2023) և ՀՀ Կոմպոզիտորների (1997) միությունների անդամ: Դասավանդել է՝ 1985-1994 թթ. Խ. Արսլյանի անվ. ՀՄՀ Գեղարվեստ. դաստիարակչության ֆակուլտետի Երաժշտության տեսության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում՝ դասախոս, (նաև 1988-1990 ամբիոնի վարիչի տեղակալ): 2004-2008 թթ. «Գլաձոր» համալսարանի լրագրության ամբիոնի «Երաժշտության համընդհանուր պատմություն» դասընթացի կազմող և դասախոս: Աշխատել է՝ 1994-1999 թթ. ՀՀ Ազգային ռադիոյի երաժշտ. գլխ. խմբագրությունում՝ խմբագիր: Հեղինակ է 2 գրքի՝ Սարաջյանի անվ. երաժշտական դպրոց, Եր., «Ատերեսում»-Անի, 2002 թ., «Յուրի Դավթյան. Մեկդարյա պատմություն Էջեր օրագրից» Եր., ԵՊԿ հրատ., 2024 թ., բազմաթիվ հոդվածների ամսագրերում

լարային քառյակի 100-ամյա հորելյանին

և ժողովածուներում՝ “Некоторые теоретические вопросы оперы Авета Тертеряна “Землетрясение”, /Авет Тертерян Международная конференция-фестиваль, Традиции и новаторство. Ер.: Арчеш, 2004, С. 84-94. Армянские мыслители о социологическом музыкальном восприятии, /Հումանիտար գիտությունների արդի հիմնախնդիրները Հայաստանում, «Գլաձոր» կառավարման համալսարան, Ե, Նոյան Տապան, 2005 էջ 335-343: Этапы эволюции Армянской профессиональной музыки для детей и юности, /նույն տեղում, Ե, Նոյան Տապան, 2006թ.: Հայկական այբուբենի հավերժականության պատուիր Ա. Տերտերյանի 6-րդ սիմֆոնիայում, /ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Քահուկյանական ընթերցումներ-2007, հանրապետ. գիտական նստաշրջանի զեկուցումներ (Ե, ապրիլի 3-4, 2007թ.), Ե, «Վան Արյան» 2007, 142-147 էջ: Հեղինակ է և ժողովածուների կազմող, շուրջ 56 գիտ. հոդվածի և թեզերի ամսագրերում, շուրջ 220-ից ավելի հոդված թերթերում, Հանրագիտարաններում՝ հեղինակային և խմբագրական աշխատանք՝ Большая Российская Энциклопедия, Москва, ՀՀՀ 4-րդ հատորում, «Հայրենի» և «Հայ երաժշտության հանրագիտարան»ի համակարգող մասնագետ: Մոսկվայի «Մուզիկայնայա սկադեմիա» ամսագրում N 1 (2005) Հայաստանի մասին տպագրված հոդվածաշարի կազմակերպիչ: 2017-ին հիմնադրել է ՀԳՄ «Հայ կոմպոզիտոր» հրատարակատեսակի ամսագիրը և 2023-ից «Հայկոմպոզիտորների ստեղծագործական գունապանակն արդի աշխարհում» գիտական հոդվածների պարբերականը: Հեղինակ է 121 ռադիո հաղորդումների, շուրջ 5 հեղինակային հաղորդաշարերի և միայնակ նա անցկացրել է երաժշտ. 5 շաբաթ՝ նվիրված 5 հայ կոմպոզիտորի:

About the author: GOHAR KARLEN SHAGOYAN (born 29.04.1958. Yerevan)-musicologist, issuer, member of the union of journalists (1995), International Federation of Journalists (2023) and composers (1997) of RA. Aspirant of MSC after Tchaikovsky, (leading professor doctor of arts, M. E. Tarakanov and E.B. Dolinskaya 1988-1989, 2002-2004) 3 month's training courses in MSC after P. Tchaikovsky(1987). Intensive courses of English in State University after Abovyan(1987). Has graduated from the department of music of YSC, (leading professor doctor of arts N.K. Takmizyan (1983)). Diploma thesis monograph “Gurgen Alemskhakh” has received certificate of honor (1988). She took courses of Grabar (1979-1981) in YSU and YSC receiving certificate with distinction. In 1998 has established scientific journal “Musical Armenia” establisher-editor in chief. (Establisher, headmaster, professor, Rector A.B. Smbatyan). From 2000 continues her activity in YSC. In 1999 has established and lead the club of friends of the journal “Musical Armenia” in public beginnings. From 2004 till now is the headmaster of publishing office of YSC (establishers-chairman of the publishing council, rector of YSC S. V. Sarajyan and Sh.). From 2004 collection of methodological articles, edition compiler and editor Sh. Chairman of editors boards. Rector, professor S. G. Sarajyan). From 2005 establisher and accountable for editions of monthly journal “Musician”. Teaching activities: 1985-1994 State University after Kh. Abovyan department of art education. Chair of theory of music and methology of teaching, lecturer 1988-1990 Deputy Head of the Department. 28 author's articles and 34 editorial works, in the Big Russian Encyclopedia, Moscow, “Armenian girl” in armenian encyclopedias. Organizer of the article series about Armenia published in the Moscow Musical Academy journal (N 1, 2005). Shagoyan make opening speeches in concerts, and reports in the international and republican conferences. Author of 2 books: “Sarajyan Music School”, Yer., “Areresum-Ani”, 2002, “Yuri Davtyan. Pages from the Diary. A Century of History”, Yer., YSC Publishing House, 2024, 121 radioprograms from which 54 about Armenian composers, 5 author's cycles (67 broadcast first time in radio of RA, week of music of composers of Armenia” of 5 authors) international concerts in Yerevan, Armenia. In 2017, he founded the “Armenian Composer” publicistic magazine of the Composers’ Union of Armenia and since 2023, the “Creative Palette of Armenian Composers in the Modern World” periodical of scientific articles.

Об авторе: ШАГОЯН ГОАР КАРЛЕНОВНА (род. 29.04.1958, Ереван) музыковед, издатель, член Союз-зов журналистов (1995) и композиторов (1997) РА. Окончила музыковед. отд. ЕГК (1983, рук., проф. докт. искусств. Н. К. Такмизян), дипломная работа - монография “Турген Алемшах” получила Почетную грамоту ИИ НАН РА (1988); проходила курсы грабара (1979-1981) в ЕГУ и ЕГК (проф. Х. Палян, по ее инициативе его пригласили в ЕГК для преподавания дисциплины “Грабар”), получив сертификат с отличием. Соискатель МГК им. П. Чайковского (рук. проф., д-р искусств. М. Е. Тараканов 1988-1992, проф., д-р искусств. Е. Б. Долинская 2002-2004, по причине Арцахской войны). Проходила курсы-стажировку в МГК им. Чайковского (1987, 3 месяца). В 1998 г. основала международный научный журнал “Музыкальная Армения”- основатель-главный редактор (основатель-директор, проф., ректор А.Б.Смбатян, утвержд. ВАКом /принятых списков диссертаций с 2003 г.). С 2000 г. продолжает деятельность в ЕГК. В 1999 г. основала и руководила клубом Друзей журнала “Музыкальная Армения” (на общест. началах). С 2004 г. по настоящее время основатель- директор “Издательства ЕГК” (с 2019 г. заведующая, основатели - председатель издательского совета, ректор ЕГК С. В. Сараджян и Ш.). С 2004 г. основатель Сборник методических статей преподавателей ЕГК (сост. и ред. Ш.). С 2005 основатель и отв. за выпуск ежемесячной профессиональной газеты “Еражишт”. Преподавала: 1985-1994 Пед. институт им. Абовяна, факультет художественного воспитания, кафедра теории музыки и методики преподавания, преподаватель теоретических дисциплин; 1988-1990 - зам. зав. каф. С 2004-2008 - препод. Университета Управления “Гладзор”, кафедра журналистики, дисциплина “Всеобщая история музыки”. Работала на национальном радио РА редактором Главной редакции муз. программ (1994-1999). Автор: “Сараджевская муз. школа” (соавтор), Ер.: Арересум-Ани, 2002, “Юрий Давтян. Страницы дневника. Вековая история” Ер.: Издат. ЕГК, 2024, с 1998; многочисленных научных статей в сборниках – “Некоторые теоретические вопросы оперы Авета Тертеряна “Землетрясение”, Авет Тертерян Международная конференция-фестиваль /Традиции и новаторство. (на рус. яз.) Ер.: Арчеш, 2004, С. 84-94; Армянские мыслители о социологическом музыкальном восприятии, /Современные проблемы гуманитарных наук в Армении, Университет Управления “Гладзор”, (на рус. яз.) Ер.: Ноян Тапан, 2005 С. 335-343; Сказ вечности армянского алфавита в 6 симф. А. Тертеряна /Институт филологии им. Р. Ачаряна НАН РА, Джаукяновские чтения, 2007, доклады республиканской научной конференциях.